



28128

# Ս.ՍԱՀԱԿ ԵՒ Ս.ՄԵՍՐՈՊ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

the VERY REV. ZAVEN ARZOUMANIAN, pastor

Մարտ 7, 1983

Գերաշնորհ

S. Թորգոմ Արքեպս. Մանուկեան

Առաջնորդ Հայց. Եկեղեցւոյ Հիւս. Ամերիկայի

Արեւելեան Թեմի

նիւ Եորթ

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Ուրախութեամբ կը հաղորդեմ Ձեր Սրբազնութեան որ համայնքիս Ծխական Ժողովը գումարեցինք Կիրակի Փետրուար 27ին, 1983, համաձայն Թեմիս կանոնադրութեան: Անձամբ նախագահեցինք ժողովին որուն ատենապետութիւնը վարեց Տիար Ըորճ Տէվլէթեան, իսկ ատենադպրութիւնը Տիկ. Մելիինէ Սարափեան: Համայնքիս 1982ի տրատու #78 անդամներէն ներկայ էին 115 անդամներ: Տեղի ունեցան ընտրութիւններ Ծխական Խորհուրդի դադարեալ վեց անդամներու տեղ վեց նորերու, ինչպէս նաեւ ընտրողական եւ Հաջուեքննիչ յանձնախումբերու համար երեքական անդամներու: Ծխական Խորհուրդի համար ընտրուեցան

- |                      |         |
|----------------------|---------|
| 1. Բարլ Պօյաճեան     | 88 քուէ |
| 2. Էլիզապէթ Պօյաճեան | 80      |
| 3. Ըորճ Ստեփան       | 80      |
| 4. Ըորճ Տէվլէթեան    | 70      |
| 5. Ըորճ Յակոբեան     | 65      |
| 6. Լուի Գարակիւլեան  | 54      |

Հաճեցէք, Սրբազան Հայր, վաւերացնել վերոյիշեալ ընտրութիւնները: Նաեւ հաճեցէք ներփակ գտնել Առաջնորդարանիդ հարցարանը, համայնքիս տարեկան տեղեկագրերու գրքոյկը, ժողովի հրաւերն ու ընտրութեանց քուէաթուղթը ընտրութեանց արդիւնքներով: Կը ներփակեմ նաեւ ժողովի ատենագրութենէն օրինակ մը ստորագրուած դիւանի անդամներուն կողմէ: Կը յուսամ որ ամէն ինչ գոհացուցիչ կը գտնէք ու ընտրութիւնները կը վաւերացնէք, որոնց համար հաճեցէք ընդունիլ բոլորիս շնորհակալութիւնները:

*Ջեմալ Կարամանլի*  
Ջեմալ Կարամանլի  
Ջաւէն Ծ.Վ. Արզումանեան, Հովիւ  
Ս.Սահակ եւ Ս.Մեսրոպ Եկեղեցւոյ  
եւ նախագահ Ծխական Ժողովի